

վառու (դնել աթթարից) կաթեցնել ա-
կանջի մէջ:

Ատամնացաւ

Հինգ մսխալ մաքուր չինի (թէյի բա-
ժակի կամ պնակի), երկու մսխալ թարա-
շիւր (դնել աթթարից) եւ մի մսխալ դանդ,
միասին ծեծել, մաղել, ածել եղէգի մէջ
եւ փչել ատամների վրայ: Կամ մանանե-
լար եւ ընկոյզն անապակ զինով երկու եւ
բերանն ողողել:

Եթէ ատամնացաւի պատճառով ջուր է
զողանում եւ ուռում, այն ժամանակ մի
փէնար ալիւրը հինգ մսխալ իւղով բովել,
վրան մի դանար մածուն ածել եւ կէս ժամ
թողնել կրակի վրայ, ապա դուրսցնել եւ
դնել ուռուցքի վրայ: Եթէ ցաւը չկարուի,
աթթարից կէս մսխալ քէթուաղուղի դնել,
ծեծել, ածել մալմալում, ջրի մէջ թրջել,
ապա մի բոպէ տաքացնել եւ դնել ցաւա-
ցած ատամի վրայ:

Քրացաւ

Կովի հում սերը քսել ցաւացած տեղը,
ապա աթթարից դնել քունջիդ, ծեծել եւ
քթի մէջ քաշել:

Քրից արիւն գալ

Քթից հոսող արիւնը կանգնեցնելու հա-
մար գլխին սառը ջուր ածել: Եթէ չկտրու-
ւի քիսին (եղան կեր) ածել կրակի վրայ
եւ բարձրացող ծուխը տանել քթածակե-
րին: Եթէ նորից չօղնի, կրակի վրայ ա-
նանուխ ածել եւ ծուխը քաշել քթի մէջ:
Երբ արիւնը կտրուի, յուլունքը սիսեռի
հետ ծեծել, մալմալով մաղել եւ քաշել
քթի մէջ: Կամ ձեռքերը վերեւ բարձրա-
ցնել, ճակատի վրայ սառը փաթեթներ
դնել եւ շուտ-շուտ փոխել: Նոյնպէս քը-
թով զով ջուր ներս քաշել:

Բերնի վերք

Եթէ բերանում վերք է լինում եւ չի կա-
րողանում կերակուր ուտել, թանի չիճու-

կը, որ կոչուում է դառառութ, երկու
զգալ բերանում դնել եւ ողողել: Կամ ե-
ղան լեղու կոչուած խոտը, որ բանում է
առուի ափերին, սանդուղ ծեծել, քամել
եւ ջրով բերանն ողողել:

Կուլացաւ (կոկորդացաւ)

Առաւօտեան անսուղ (անթի) կղակի
տակից դէպի ականջները մատներով երեք
անգամ մաժել, ընդամէնն երկու առա-
ւօտ. կամ լեղուի տակ դանում երկու ե-
րակներից նշտարով արիւն առնել:

Բկացաւ

Առաջ է գալիս գլխաւորապէս մրսելուց,
որի նշաններն են. — հիւանդի բերանը
կարմրում է, քիմքն ուռում, տեղ-տեղ ե-
րեւում են սպիտակ թաղանթներ կամ լե-
զունն ուռչում է եւ սպիտակով ծածկւում,
խիլ լորձուկը կուլ տալիս՝ ցաւ է զգում,
երբեմն էլ ջերմ է լինում: Բժշկուելու
համար հիւանդին անկողնում պառկեցնել,
վիզի կապով փաթաթել, կոկորդն աղա-
ջրով ողողել կամ մեծ բաժակ ջրի մէջ
մէկ թէյի զգալ բորակի թթու ածել եւ
ողողել, իսկ ջերմի դէմ օրական 1-2 ան-
գամ քինա տալ, փորկապութեան դէմ էլ՝
լուծողականներ:

Երեխայի կոկորդի բորբոքում

Երեխային պահել անկողնում, վիզը
փաթաթել կապով, տաք կաթ խմեցնել եւ
աղաջրի գոլորշի շնչել տալ: Երեխան,
երբ զիշեր ժամանակ յանկարծակի հի-
ւանդանում է կոկորդի սուր բորբոքումով
եւ սկսում է խիստ հազալ, նշանակում է
օդի պակասութիւն է զգում. երեխային
ինքնակողմից տաք գոլորշի շնչել տալ եւ
տաքերը տաք ջրի մէջ պահել:

(Շար. 1)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ՃՇՏՈՒՄՆԵՐ

ՄԻՆԱՍ ԱՄԹԵՅԻՒ ՄԱՍԻՆ

(Նիւթեր՝ ԶՆԴՈՒՇԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ)

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1966, ք. 7-8, էջ 193)

Ա. ԱԼՊՈՅԱՆՆԻ ՍԵԱԼՆԵՐԸ

Մինաս Ամթեյու մասին Չնքուշի վե-
րաբերեալ Ա. Ալոյսյանի սխալները,
աւելի ճիշտ՝ խեղաքիւրումները կը սկը-
սին Ամթեյու եպիսկոպոս ձեռնադրուած
օրէն: Այսպէս, մինչ Հ. Ն. Ալինեան կը
գրէ. «1666ին Մինաս Երուսաղէմ կ'եր-
բայ եւ ուրիշ երկու նուիրեալներու հետ
եպիսկոպոս կը ձեռնադրուի Եպիսկոպ
հակաքոռ կարողիկոսէն» (Հ. Ա. 1960,
թիւ 7-9), լռելով ո՞ր քաղաքի, ո՞ր թեմի
վրայ ձեռնադրուելու մասին, Ա. Ալոյ-
սյան, իւրաքանչեւ «հաւանօրէն» օդ-
նութեան կանչելով, չը գրէ. —

«1666ին երկու վարդապետներու հետ
(Մինաս Ամթեյին) եպիսկոպոս կը ձեռ-
նադրուի Երուսաղէմի մէջ Եպիսկոպ Այն-
քապիէն, հաւանօրէն Չնքուշի վրայ, ուր
էր 1680ին» («Պատմութիւն Եւդոկիոյ հա-
յոց», էջ 646):

Կրկնութենէ խուսափելու համար՝ զանց
կ'ընենք այստեղ մեր գիտողութիւնները
«հաւանօրէն Չնքուշի վրայ» բառերուն
այլանդակօրէն «ուր էր 1680ին» բառե-
րուն կցուելուն մասին (Այդ դիտողու-
թիւնները հանգամանօրէն կատարած եմ
մեր «Չնքուշի անիւրաւած» յօդուածին
մէջ. «Բազմավեպ», 1964, քիւ 4-6, էջ
125-126), կ'անցնինք ուղղակի սխալին
ճշտումին:

1666ին Չնքուշի առաջնորդն էր Մար-
կոս վարդապետը, եւ այս ո՛չ թէ «հա-
ւանօրէն» այլ ստուգապէս — «Եւ անկէ

(Չնքուշի Յովհաննէս վարդապետէն)
Ետք, նոյն քուականին, ՌՂԲ (1643) տա-
րին արքայ կը յաջորդէ անոր աշակերտը
Մարկոս վարդապետ Հացուտցի (Հացու-
տը Չնքուշի մօտիկ փոքր գիւղ մըն էր) ...
ՌՃԻԸ (1679) քուականին վախճանեցաւ
Մարկոս վարդապետը եւ...» (Թ. Ա. Բ.,
էջ 458):

Ուրեմն, ճիշտ կ'ըլլայ ըսել, 1666ին
Մինաս եպիսկոպոս ձեռնադրուեցաւ ո՛չ
թէ Չնքուշի, այլ Թոխատի վրայ, ուր մի
քանի տարի առաջ գացած էր քարոզելու,
ինչպէս տեսանք Հ. Ներսէս Ալինեանի
վերաբերեալ մասին սկիզբը, եւ, անտա-
րակոյս, սիրուած ալ էր: Չայս կ'աղա-
ցուցանեն Թոխատի մէջ իրեն աշակեր-
տած գրիչները՝ Թոխատցի Միքայէլ
եւ Չուղայեցի Մկրտիչ իրենց բոլոր յի-
շատակարաններուն մէջ, մինչեւ 1696,
Մինաս Ամթեյին «արեւալակապոս եւ-
դոկիակերտի» եւ «առաջնորդ Թոխատու»
կոչելը (այս մասին բացատրած ենք
ներկայ յօդուածի վերամասին մէջ) եւ,
մանաւանդ, Թոխատի մէջ Մինասի «հո-
գեւոր Տէրը»՝ Եպիսկոպ հակաթոռ կա-
թողիկոսը՝ Մինասին պէս «զով ու դա-
նատ»ի մը կարիքն ունենալը, ինչպէս
պիտի տեսնենք ստորեւ:

Ա. Ալոյսյանի Թոխատի աւելի քան
քառորդ դարու առաջնորդութիւնը, իր
«հաւանօրէն»ներով, չըջափոխած, յե-
տաւորապէս, Ամթեյին Թոխատի ա-
ռաջնորդական աթոռին վրայ, ուրիշ

տիրոս վարդապետին և Յովհաննէս վարդապետին և Մարկոս վարդապետին և մարմնաւոր ծնողներու... Անոնք որոնք գողնալով այս գիրքը (դուրս) հանեն Շէնֆուշէն, նգովեալ ըլլան ԳձԺԸ (318) հայրապետներէն⁷ և ժԲ (12) մարգարէներէն և ժԲ (12) առաքելներէն և ժԲ (12) աստուածաբան վարդապետներէն, և Սուրբ Երրորդութենէն, և Քրիստոսի օրհնեալ բերանէն, նաեւ ինձմէ՝ Մինաս վարդապետէս, հոգւով և մարմնով կապուին այս և գալիք աշխարհին մէջ... ամէն: Գրուեցաւ Հայոց ՌձԽԶ (1697) քրականին Յունիս ժ (10)ին, իմ՝ Մինաս վարդապետիս ձեռնով, Ս. Էջմիածնի մէջ, Տէր Նահապետի կաթողիկոսութեան ժամանակ» (Թորոս Աղբար, Բ. էջ 485-486, Թ. 43, Մեկնութիւն Սորհրդոյ Պատարագի ի Ներսիսէ Լամբրոնացոյ):

Ի՞նչ անաւոր անէ՞ք՝ չնքուչիական արժէքի մը գողացողին և որպիսի՝ անձնանուէր զոհարարութիւն ու գործաւոր սէր Չնքուչին ու չնքուչիներուն...

Հիմա, որ մորթոտուած է հայ Չնքուչը և յաւիտ կորած անոր մատենագրական արժէքները, մարդ կը տարուի մտածելու, թէ երանի՜ Ամթեցին այնքան չափ չսիրէր Չնքուչը, թոյլ տար որ մնար Լամբրոնացու այդ գլուխ-գործոց մատենար Էջմիածնի մէջ, այսօր գուցէ այն ևս (ինչպէս 1586ին Չնքուչի մէջ՝ դըրուած Չնքուչի Գասպար զրէի Շարակնոցը) ազատուած կ'ըլլար փճացումէ ու կը պահպանուէր Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանին մէջ ու, աւելին, Չնքուչապատումին համար ապահովուած կ'ըլլար՝ Չնքուչի վանուց վարդապետարան-գլխոցի հիմնադիր Մեծն Մարտիրոս Չնքուչիի («որոյ գոն ծրեալ մա-

տանց նորին յոյով գրեանք ի սուրբ վանքս և եկեղեցին որ ի Շէնֆուշէ» - Թ. Ա. Բ. էջ 458) մէկ ձեռագիր գործը: Ի դէպ, Մեծն Մարտիրոս իր օրինակած զրքին սեմնէն յիշատակարան մ'ալ կցած է, որը պիտի երևի Չնքուչապատումին մէջ:

* * *

Լուսարանութեան կարօտ կէտ մը ևս: Մինաս Ամթեցի՝ Եպիսկոպոս օծուած ըլլալով Թոխատի վրայ, անոր առաջնորդութեան ութ տարիներուն (1666-74) Թոխատի մէջ իրեն աշակերտած ծանօթ զրէիներ՝ Միքայէլ Թոխատցին և Միլըրտիչ (կամ Մկրտում) Չուղայեցին, իրենց բազմաթիւ յիշատակարաններուն մէջ (1678-1696) զայն կոչած են «արհեստիկոպոս եւդոկիակերտի» և «արհեստիկոպոս եւդոկիա քաղաքի»: Որպէս զի սխալ մեկնութիւն չտրուի այս երեւոյթին, չեղանք, թէ այդ տիտղոսները բովանդակող յիշատակարանները զրուած տարիներուն՝ Ամթեցին Թոխատի առաջնորդ եղած չէ, այլ Թոխատի մէջ իրեն աշակերտած այդ զրէիները անոր տուած են այդ տիտղոսները՝ Թոխատի վրայ ձեռնադրուած ըլլալուն համար - սուփութիւն մը, որ Ե. զարէն սկսեալ գոյութիւն ունեցած է Հայոց մէջ և ներկայիս ալ առկայ է բոլոր քաղաքակիրթ երկիրներուն մէջ:

(Վերջ)

ԳԱՌՆԻԿ ԳԵՈՐԳԵԱՆ

7. Կ'սկսեալէ 325 թուականին Կոստանդիանոսի հրաւերով Նիկիոյ մէջ գումարուած Տիեզերական Ժողովին, որուն 318 հայրապետներուն մէջ էր նաեւ Հայոց Արիստակէս Հայրապետը, Գրիգոր Լուսաւորչի որդին:

ՎԱՏԻԿԱՆԵԱՆ Բ. ԺՈՂՈՎԻ ՀԵՏԻՄԵՐՈՎ

ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԿՐԾՆՔԸ

Բազմաթիւ ազգակներէ կը պայմանաւորուի քաղաքակրթութեան մը զարգացումը, որոնք գէթ մասամբ՝ կը բնորոշեն նաեւ անոր նկարագիրը:

Քաղաքակրթութիւն մը, իր ամբողջութեան մէջ, կ'արտայայտէ մարդկային հոգին, արդիւնք է և հայեարացում մը՝ անոր յղացքներուն և ձգտումներուն, կարիքներուն և պահանջներուն, պատմական որոշ ժամանակաշրջանի մը մէջ:

Դիւրին չէ ճշգրիտ և անթերի գնահատանք մը կատարել՝ քաղաքակրթութեան մը զիմագիծը բնորոշող ազդեցութիւններուն տարողութեան և հետեւանքներուն, երբ մանաւանդ խնդիրը ժամանակակից իրողութեան մը կը վերաբերի: Ասով իրողութեան մը կը վերաբերի: Ասով հանդերձ, տարբեր խառնուածքով և հանդերձ, կամ տարբեր զաղափածոյութիւններէ ու հայեցակէտերէ մեկնող անձեր համաձայն կը թուին վրձնական գեր մը վերագրելու մէջ՝ որոշ երեւոյթներու, քանի որ դարձեալ մտածելակերպին և աշխարհայեացքին ներկայութիւնը կը թուեն բազմապատկառ: Այսպէս կը թուեն բազմապատկառ՝ ամէն տեսակ հաղորդակցութեան միջոցներու, նոր յարաբերութիւններու երեւումը՝ անհատին և ընկերութեան միջեւ, մանաւանդ ծաւալումը «ընկերայնացումի» (socialisation) երեւոյթին, տնտեսական բարդաւաճումը, գիտարուեստի (technique) տիրապետութիւնը՝ մարդկային կենցաղավարութեան բոլոր խաւերուն մէջ, ևն. մինչ կարելի է այս խաւերուն մէջ, ևն. մինչ կարելի է այս բոլորին իրրեւ հասարակաց արտադրիչ ղեկավարութիւններու հսկայաքայլ նկատել գիտութիւններու հսկայաքայլ յառաջադիմութիւնը: Ասոնք կը միտին

նոր զիմագիծ մը տալու մարդկութեան, կը թափանցեն անոր իմացական, հոգեբանական, գրական ու գեղարուեստական բոլոր արտայայտութիւններուն մէջ: Նոր «հիմանիդ» մը կը կերտուի, իրրեւ առանցք ունենալով մարդը՝ տիեզերքի զաղտնիքները որոնելու և անոր տիրելու տենչով առկուծ. աւելի խորացնելով, պիտի ըսենք մարդը՝ զիտակից ու նախանձախնդիր աւելի քան երբեք իր արժանապատուութեան և ազատութեան:

Հոս սակայն կը սկսին տարակարծութիւնները, երբ մարդիկ կը փորձեն աւելի մասնական եղբայրով սահմանել իրենց այս առանձնաշնորհութիւններուն հարազատ պահանջները:

Մարդկութեան ստուար դանդաղումը համար, իրրեւ անհրաժեշտ պայման կը ներկայանայ անոնց լիով իրականացումին՝ բացարձակ անկասկածի մը գերազոյն ու գերանցական (transcendant) սեւէ ձալէ կամ օրէնքէ. մանաւանդ թէ այդպիսի կախումաւորութիւն մը հերքուած կը թուի իրենց նոյն ինքն արդի քաղաքակրթութեան զգլխիչ ընթացքն անպատշաճ՝ յառաջագիտ ու նախապաշարութեան ձերբազատուած ընկերութեան մը:

Անոնք որ այսպէս կը խորհին՝ չեն անգիտանար, ոչ ալ ուղղակի զիտում ունին ուրանալու թէ կրօնքը, իմացական գերազոյն ձալէ մը, ուրիշ խօսքերով՝ Աստուծոյ մը զաղափարը և պաշտամունքը, կանգնած են զարեւոյթ քաղաքակրթութիւններու հորիզոնին վրայ՝ իրրեւ բացայայտ կամ լռելեայն վերաբերումի